ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2026 թվականի մարտի 25-ի կայացած գիտխորհրդի նիստի

Օրակարգում՝

1. Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակի առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրիատի և մագիստրատուրայի քննաշրջանի ամփոփում։ /զեկ.՝ Ա.Բաղդասարյան/

2. 2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակի սոց. հարցման արդյունքների ամփոփում։

3. Պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնների տեղակալման մրցույթի մասին։ /զեկ.՝ Ա.Բաղդասարյան/

4. Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի երեք հայցորդների ատենախոսության թեմաների երաշխավորման հարցը։ /զեկ.՝Հ.Ավանեսյան/

- Սաթենիկ Հարությունյան- թեմա՝ «Կին ծանրորդների հավակնության մակարդակի և մրցակցային բարձր արդյունքների հարաբերակցության առանձնահատկությունները»։
- Նորա Երզնկյան- թեմա՝ «Արհեստական բանականության ներդրման յուրահատկությունները մարզիկի հոգեբանական պատրաստության համակարգում»։
- Անի Գրիգորյան- թեմա՝ «Հուզական այրման համախտանիշի ազդեցությունը փրկարար ծառայողների մասնագիտական ինքնիրացման վրա»

5. ԵՊՀ դասընթացների գնահատման վերաբերյալ ուսանողների միջանկյալ հարցում անցկացնելու մասին։ /զեկ.՝ Ն.Ալավերդյան/

6. Ուսումնական պլանների հաստատում։ /զեկ. կրթական ծրագրի ղեկավարներ/

7. Հոգեբանական աջակցության ուսումնագործնական լաբորատորիայի կանոնադրության հաստատում։

8. Ընթացիկ հարցեր։

1. Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակի առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրիատի և մագիստրատուրայի քննաշրջանի ամփոփեց Ա.Բաղդասարյանը։

Նշվեց, որ շարժունության պատուհանի հետ կապված կան դուրս մնացած ուսանողներ՝ 4-րդ կուրսից դուրս են մնացել 2 հոգի, իսկ մագիստրանտներից մեկը ունի դասընթացի կրկնություն։

2. 2025-2026 ուստարվա 1-ին կիսամյակի սոց. հարցման արդյունքները ամփոփեց Ա.Բաղդասարյանը։ Նշվեց, որ արյունքները գոհացուցիչ են, սակայն ամբիոնի վարիչները այն պետք է քննարկեն նիստերի ժամանակ։

3. Ա.Բաղդասարյան ներկայացրեց պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնների տեղակալման մրցույթին դիմողների քանակը։

- Ընդհանուր հոգեբանության ամբիոնից՝ 4 դոցենտ և 1ասիստենտ
- Փիլիսոփայության տեսության և պատմության ամբիոնից 1 ասիստենտ
- Սոցիալական և կլինիկական հոգեբանության ամբիոնից՝3 ասիստենտ։

4. Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի երեք հայցորդների ատենախոսության թեմաները երաշխավորվեցին՝

- Սաթենիկ Հարությունյան- թեմա՝ «Կին ծանրորդների հավակնության մակարդակի և մրցակցային բարձր արդյունքների հարաբերակցության առանձնահատկությունները»։
- Նորա Երզնկյան- թեմա՝ «Արհեստական բանականության ներդրման յուրահատկությունները մարզիկի հոգեբանական պատրաստության համակարգում»։
- Անի Գրիգորյան- թեմա՝ «Հուզական այրման համախտանիշի ազդեցությունը փրկարար ծառայողների մասնագիտական ինքնիրացման վրա»
- 5. ԵՊՀ դասընթացների գնահատման վերաբերյալ ուսանողների միջանկյալ հարցում անցկացնելու մասին զեկուցեց Ն.Ալավերդյանը՝ 10-րդ շաբաթում ուսանողները գնահատում են դասընթացը, 11-րդ շաբաթում ամփոփվում են

արդյունքները: 12-րդ շաբաթում հետադարձ կապի միջոցով իրականացվում է դասընթացի բարելավում:

- 6. Կրթական ծրագրի ղեկավարները ներկայացրեցին ուսումնական պլաններում փոփոխությունները: ԿԾ-ը հաստատվեցին միաձայն:
- 7. Հոգեբանական աջակցության ուսումնագործնական լաբորատորիայի կողմից ներկայացվեցին կանոնադրության փոփոխությունները:Առաջարկ կար պրակտիկան դարձնել 1,5 տարի: Գիտության կոմիտե անհրաժեշտ է ներկայացնել պրակտիկա անցած ուսանողների քանակը:

8. Ընթացիկ հարցերի շարքում քննարկվեցին՝

- ԵՊՀ ուսանողների և աշխատողների ակադեմիական շարժունության արդյունքների և որակավորումների ճանաչման կարգի նախագծի մասին;
- ԵՊՀ-ում 2025թ. կատարված գիտական աշխատանքները ամփոփելու համար մարտի 9-ից մինչև ապրիլի 30-ը ֆակուլտետում անկացնել գիտական հաշվետու սեմինարներ:
- Ասպիրանտուրայի ընդունելության /առկա, հեռակա/ մասնագիտական քննական հարցաշարերի վերանայում:
- Դասագրքերի վերաբերյալ /1.000,000 դրամ առաջին յոթ դասագրքերի համար/:
- Շրջանավարտների ֆորում անցկացնելու մասին հարցը:
- Զանգի վերաբերյալ կարծիքներ:

Նիստի նախագահ ___Ա.Բաղդասարյան_____

Քարտուղար ___Վ.Պապոյան_____